ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

20.03.2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/3-Տ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Երևան << 08 >> ----------02---------- 2019թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ս. Զատիկյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ և <<Թունել>> ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս Ընկերության տնօրեններ Ա. Մարտիկյանի և Ա. Սանահյանի, որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և 06.03.2017թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից հիմք ընդունելով 20.03.2017թ. կնքված <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/3-Տ>> ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կատարողի կողմից՝ 2017 թվականի մարտի 20-ին կնքված N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/3-Տ Պայմանագրի՝ 2018 թվականի կատարված աշխատանքների (Համաձայնագիր N 4-ի հավելված 1.2.1-ով նախատեսված) և 2019 թվականին Արփա-Սևան N 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություն) համար վճարման ենթակա գումարը սահմանել 20 143 000 (քսան միլիոն մեկ հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Ծառայությունը մատուցվում է 2019 թվականի հիմնանորոգման աշխատանքներին զուգահեռ:

1.3 Սահմանել Ծառայության վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.4 Պատվիրատուն 2019 թվականին իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2019թ.:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի գործողությունը տարածվում է կողմերի՝ մինչև համաձայնագրի կնքումը փաստացի ծագած հարաբերությունների վրա, ինչպես նաև գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մաս:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011716
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Ա. ՋԱՏԻԿՅԱՆ
Կ. Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ
ք. Երևան,Վ. Վաղարշյան 12
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000088680300
ՀՎՀՀ 00012859
Տնօրեն

Ա. ՄԱՐՏԻԿՅԱՆ
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
<<Թունել>> ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 31, բն. 20
<<Էվոկաբանկ>> ՍՊԸ
Հ/Հ 1660000445850100
ՀՎՀՀ 02542333
Տնօրեն

Ա. ՍԱՆԱՀՅԱՆ
Կ.Տ

Հավելված 1
<<20>> մարտի 2017թ. կնքված
N <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/3-Տ>> գնման պայմանագրի
<<08>> փետրվարի 2019թ.
կնքված Համաձայնագիր 4-ի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | 71351540-1 | տեխնիկական հսկողության ծառայությումն- Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների որակի | | 7 855 700 | 7 855 700 | 11 682 900 | 11 682 900 | 11 682 900 | 16 315 800 | 16 315 800 | 16 315 800 | 20 143 000 | 20 143 000 | 20 143 000 | **20 143 000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011716
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Ս. ՋԱՏԻԿՅԱՆ
Կ. Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ
ք. Երևան ,Վ. Վաղարշյան 12
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000088680300
ՀՎՀՀ 00012859

Ա. ՄԱՐՏԻԿՅԱՆ
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
<<Թունել>> ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 31, բն. 20
<<Էվոկաբանկ>> ՍՊԸ
Հ/Հ 1660000445850100
ՀՎՀՀ 02542333
Տնօրեն

Ա. ՍԱՆԱՀՅԱՆ
Կ.Տ